Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 09/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի CW «A» և «B» պոմպերի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի
Հայտերի բացման

ք. Երևան 9 հունիսի 2017թ. ժ. 15:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Չիդեմյանը

Վ. Խաչատրյանը

Պ. Բոշնաղյանը

Լ. Օհանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Գնումների պլանով նախատեսված գինը 4 000 000 ՀՀ դրամ

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 09/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակիցների գրված տեղերի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի CW «A» և «B» պոմպերի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 09/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել երեք կազմակերպություն՝

1. «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ
2. «Տեխնոսնաբ» ՍՊԸ
3. «Էներգանորոգզարանտ» ՍՊԸ

1.2. «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը:

1.3. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 3 050 000 (երեք միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ, հրավերը ներկայացնելու պահին հանդիսանում է ԱԱՀ չվճարող:

1.4. «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը, հավելված 4-ում ՝ գնային առաջարկ, աղյուսակի 3-րդ և 4-րդ սյունակները լրացված թերի, գրված թվերը տառերով չի գրված:

1.5. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 3 680 000 (երեք միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

1.6. «Էներգանորոգզարանտ» ՓԲԸ-ն հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը:

1.7. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Էներգանորոգզարանտ» ՓԲԸ -ի գնային առաջարկը հետևյալն է՝ 3 957 600 (երեք միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտի և մասնակցի գրաված տեղի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էներգանորոգզարանտ» ՓԲԸ -ին:

2.2. «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, համաձայն ՀՀ Կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի մերժել, Հավելված 4-ի՝ Գնային առաջարկ, 3-րդ և 4-րդ սյունակներում թվերը տառերով չլրացվելու պատճառով:

2.23Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակիցին՝ հանձնաժողովի որոշման մասին:

[illegible] «Հրազդանի ջերմաէլեկտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի CW «A» և «B» պոմպերի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցման պատասխան եզրակացությունը ստանալուց հետո այն տրամադրել գնահատող հանձնաժողովի անդամներին:

1.2. Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Ս. Չիդեմյան

Վ. Խաչատրյան

Պ. Բոշնաղյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան